Հավելված 5.1.1

ՀՀ ֆինանսների նախարարի <<21>> դեկտեմբերի 2015թ.

թիվ 914-Ա հրամանի

Հաստատված է

-ԼՄԱՀ-ՆՈւՀ-ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ--16/1-- ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի

2016թ. <<հունվար>> <<29>>-ի թիվ <<1>>որոշմամբ

Ախթալա համայնքի ՆՈւՀ ՀՈԱԿ

# ՀՐԱՎԵՐ

ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈւՀ ՀՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ` ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

Հարգելի մասնակից

Նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՒՀ ՀՈԱԿ*-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ *ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ* ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՍՈՒՅՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ

### ՄԱՍ I.


1. Գնման առարկայի բնութագիրը
2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը
3. Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը

4. Հայտը ներկայացնելու կարգը
5. Հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետվերցնելու կարգը
7. Հայտերի բացումը
8. Հայտերի գնահատումը, համեմատումը և արդյունքների ամփոփումը
9. Պայմանագրի կնքումը
10. Պայմանագրի ապահովումը
11. Ընթացակարգը չկայացած հայտարարելը
12. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը


### ՄԱՍ II. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ


1. Ընդհանուր դրույթներ
2. Ընթացակարգի հայտը
3. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերը
4. Հայտի գնային առաջարկը
5. Հայտը պատրաստելու կարգը
6. Հավելվածներ 1-11


*Լոռու մարզի Ախթալա համայնքի ՆՈՒՀ ՀՈԱԿ*-ը (այսուհետև՝ Պատվիրատու)՝ *սննդամթերքի* ձեռքբերման նպատակով կազմակերպել է <<-ԼՄԱՀՆՈՒՀ-ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/1-->> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը (այսուհետև՝ընթացակարգ) և տրամադրում է սույն հրավերը:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետև՝ Կարգ) և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած հնարավոր մասնակիցները:

Սույն ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել *_Լոռու_մարզ_ք._Ախթալա_Աբովյան*_2/1 հասցեով, փաստաթղթային ձևով մինչև սույն հրավերը հրապարակվելու օրվան հաջորդող <<7>> րդ աշխատանքային օրվա ժամը <<$12^{00}$>>-ը և դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված

կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել Պատվիրատուին սույն հրավերի հրապարակման օրվանից մինչև` *փետրվարի 26* ժամը <<12$^{00}$>>-ը: Ընդ որում, փաստաթղթային ձևով հրավեր ստանալու համար Պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձևով հրավերի տրամադրումն անվճար այդպիսի պահանջ ստանալուն հաջորդող աշխատանքային օրը:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում Պատվիրատուն ապահովում է հրավերի` էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի` սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Ախթալա համայնքի ՆՈւՀ ՀՈԱԿ էլեկտրոնային փոստի հասցեն է` akhtalamanko@mail.ru,

հեռախոսահամարն է` 055-26-63-49:

ՄԱՍ I

## 1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

***Գնման առարկա է հանդիսանում** Ախթալա համայնքի ՆՈւՀ ՀՈԱԿ **կարիքների համար՝ սննդամթերքի ձեռքբերումը, որոնք խմբավորված են <<28>> չափաբաժինների՝***

| *Չափաբաժինների համարները* | *Չափաբաժնի անվանումը* |
|---|---|
| 1 | Մակարոն, վերմիշել |
| 2 | Շաքարավազ |
| 3 | Բուսական յուղ, ձեթ |
| 4 | Բրինձ |
| 5 | Ցորենաձավար |
| 6 | Ոսպ |
| 7 | Հնդկաձավար |
| 8 | Տոմատի մածուկ |
| 9 | Թխվածքաբլիթ |
| 10 | Կակաո |
| 11 | Թեյ |
| 12 | Աղ, կերակրի մանր |
| 13 | Կաղամբ |
| 14 | Գազար |
| 15 | Բազուկ |
| 16 | Սոխ |
| 17 | Կանաչի խառը |
| 18 | Կարտոֆիլ |
| 19 | Տավարի միս |
| 20 | Հավի միս |
| 21 | Թթվասեր |
| 22 | Կարագ |
| 23 | Խտացրած կաթ |
| 24 | Հավկիթ |
| 25 | Կոնֆետ |

Ախթալա համայնքի ՆՈւՀ ՀՈԱԿ տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

## 2. ՄԱՄՆԱԿՑԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ <<Մասնակցության իրավունքը>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) եթե Մասնակիցը հայտով ներկայացրել է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ Մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին,

2) բացի հայտարարությունից, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով Մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

2.2 Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք.

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ,

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

3) որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Եթե Մասնակիցը հայտով ներկայացրել է սույն հրավերի II մասի 2.2.1 կետով նախատեսված գրավոր հայտարարություն, ապա տվյալ Մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին:

2.3 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,
2) տեխնիկական միջոցներ,
3) ֆինանսական միջոցներ,
4) աշխատանքային ռեսուրսներ:

Ընդ որում մասնակցի՝

- <<Մասնագիտական փորձառություն>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.2) համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին: Նմանատիպ են համարվում սննդամթերք ապրանքների մատակարարումը:

2) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

- <<Տեխնիկական միջոցներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.3) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

2) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

- <<Ֆինանսական միջոցներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.5) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.

2) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

- <<Աշխատանքային ռեսուրսներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.6) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

2) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

Որակավորման չափանիշներից որևէ մեկին չբավարարելու դեպքում Մասնակցի հայտը մերժվում է:

## 3. ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն` Մասնակիցն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած Մասնակցին պարզաբանումը տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում:

3.2 Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում` հարցումը կատարած Մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրվան հաջորդող օրը, առանց նշելու հարցումը կատարած Մասնակցի տվյալները:

3.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

3.4 Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարությունն է հրապարակվում տեղեկագրում :

3.5 Հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից:

## 4. ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում ընթացակարգի հայտ:

***Մասնակիցները կարող են ընթացակարգի հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ միաժամանակ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար***: Ընթացակարգի հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Ընթացակարգի հայտերը ներկայացվում են մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Ընթացակարգի հայտերի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի II մասում` Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերը պատրաստելու հրահանգում:

4.2 Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերը տեղեկագրում հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ աշխատանքային օրվա ժամը $12^{00}$-ն, ք. Ախթալա Աբովյան 2/1 հասցեով: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Լևոն Խոյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում` ըստ ստացման հերթականության` գրանցամատյանում նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով Պատվիրատուն տրամադրում է հայտի ընդունման մասին տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք` ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

4.3 Մասնակիցը հայտով ներկայացնում է`

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում` նշելով հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. իր կողմից հաստատված հայտարարություն` Օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

գ. գնային առաջարկ,

ե. սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ների) պատճենը,[1]

զ. իր կողմից հաստատված հայտարարություն` առաջարկվող ապրանքի` հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը,

[1] *եթե հրավերով նախատեսում է Պատվիրատուն*

է. իր կողմից հաստատված հայտարարություն՝ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք մատակարարելու վերաբերյալ [2]:

ը. գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրը իրականացվելու է գործակալության միջոցով.

թ. համատեղ գործունեության պայմանագիրը, եթե Մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցում է համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

## 5. ՀԱՅՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՀԱՅՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ հայտը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

5.2 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցը, մինչև սույն հրավերի 4.2 կետում նշված՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

5.3 Հայտի փոփոխման մասին ծանուցումն ուղարկվում է սույն հրավերի II մասի՝ <<Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը պատրաստելու>> կարգի 5.1 կետի պահանջներին համապատասխան կազմված ծրարով՝ դրա վրա ավելացնելով <<փոփոխում>> բառը: Հայտը հետ վերցնելու դեպքում Մասնակիցը, մինչև հայտերի բացելը, ներկայացնում է այդ մասին գրավոր ծանուցում:

## 7. ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ

7.1 Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) բացման նիստում՝ ծանուցվելու օրվան հաջորդող 7-րդ աշխատանքային օրվա ժամը $12^{00}$-ին, ք. Ախթալա Աբովյան 2/1 հասցեում:

7.2 Հայտերի բացման նիստում՝

1) նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գինը՝ մեկ թվով արտահայտված: Հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն է հաղորդում գրանցամատյանում կատարված գրառումների մասին և հանձնաժողովի նախագահին է փոխանցում հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը նախագահին փոխանցվելուց հետո հանձնաժողովը գնահատում է՝

ա. հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված հայտերը,

բ. բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.

3) հանձնաժողովի նախագահը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված հիմք ընդունելով տառերով գրվածը:

4) հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը.

5) հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները՝

---

[2] *Մասնակիցը սույն կետով նախատեսված հայտարարությունը հայտով ներկայացնում է, եթե առաջարկում է մատակարարել Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք:*

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր Մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս Մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը Մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ Մասնակիցների ներկայացրած գների, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, որոշվում և հայտարարվում են առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե Մասնակիցների ներկայացրած գները դեռևս գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած, և պայմանագիր չի կնքվում։

7.2.1 Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն։ Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները։

Եթե հանձնաժողովի անդամը և (կամ) Մասնակիցը հայտերի բացման վերաբերյալ ցանկանում է արտահայտել հայտերի բացման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է սույն կետում նշված արձանագրությանը։

7.2.2 Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով։ Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են։

7.2.3 Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով։ Ընդ որում, հանձնաժողովի կողմից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս՝

ա. գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 2-րդ մասի 4.2 կետում նշված հարկի գումարի հաշվարկման,

բ. գնման առարկաների գծով գնային առաջարկների գնահատման և համեմատման ընթացքում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ առաջարկող մասնակիցներն ունեն մինչև 15 տոկոս գնային առավելություն[3]։ Իսկ ընտրված մասնակից ճանաչվելու և պայմանագիր կնքվելու դեպքում ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման ժամանակ Պատվիրատուին պետք է ներկայացվի նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը։

7.2.4 Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը։ Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ ---------------------[4] փոխարժեքով։

7.2.5 Հանձնաժողովի, Պատվիրատուի և Մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ ընթացակարգին մասնակցել է մեկ Մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ Մասնակցի հայտ։ Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը և (կամ) վճարման պայմանների փոփոխությանը.

2) Օրենքով նախատեսված այլ դեպքերի։

---

[3] *Եթե գնման հայտով ներկայացված տվյալ գնման առարկայի պահանջվող քանակի և առավելագույն գնի արտադրյալը գերազանցում է գնումների բազային միավորի 70-ապատիկը, ապա սույն ենթակետը հրավերից հանվում է։ Ընդ որում, գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում գնման առարկայի պահանջվող քանակի և առավելագույն գնի արտադրյալը հաշվարկվում է ըստ չափաբաժինների։*

[4] *Սահմանվում է Պատվիրատուի կողմից։*

7.2.6 Էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկությունները էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով.

7.2.7 Պահանջի դեպքում Մասնակցի հայտի, ներառյալ գնային առաջարկի, ինչպես նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը պարունակող փաստաթղթի պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած Մասնակցին:

7.3 Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը, կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

7.4 Եթե սույն հրավերի 7.3 կետով սահմանված ժամկետում Մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում:

7.5 Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝

1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում նշված հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին[5]:

2) ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին.[6]

3) ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված ժամկետում ներկայացնել նաև լրացուցիչ հիմնավորումներ, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին: Ընդ որում, գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

---

[5] *Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, կամ եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը, ապա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությունը <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի մասով չի գնահատվում:*

[6] *Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, կամ եթե գնման առարկան անշարժ գույքն է, ապա սույն ենթակետը խմբագրվում է՝ նկատի ունենալով, որ առաջին տեղը զբաղեցնող մասնակցի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր չեն ներկայացվում:*

7.5.1 Պայմանագիրը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ սույն ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված Մասնակիցը:

7.5.2 Մասնակիցները կարող են սույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին.

2) Մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն.

3) կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.5.3 Քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

7.6 Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը սույն հրավերի 7.5 կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով Պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան եզրակացություն: Սույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում Մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականության համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում Մասնակցի ներկայացրած հայտարարությունը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունենալու մասով, որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ Մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ Մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները Պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն կետում նշված՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությունը համարվում է հարկային գաղտնիք, բացառությամբ Մասնակցի կողմից կամ նրա համաձայնությամբ հրապարակված տեղեկությունների:

7.7 Սույն հրավերի 7.5-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված՝ Մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերն ուղարկելու ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը: Սույն կետում նշված փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապա-տասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

7.8 Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել հանձնաժողովի նիստերին: Նրանք կարող են պահանջել հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ օրացուցային օրվա ընթացքում:

## 8. ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՀԱՄԵՄԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

8.1 Սույն հրավերի 7.7 կետով նախատեսված փաստաթղթերը գնահատելու նպատակով հրավիրվող նիստում`

8.1.1 հանձնաժողովը գնահատում է սույն հրավերի 7.7 կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին:

8.1.2 Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերի և սույն հրավերի 4.3 կետի <<գ >> ենթակետով նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը[7]:

8.1.3 Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապա-տասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

8.1.4 Եթե Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության եզրա-կացության համաձայն առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը Հայաստանի Հանրապետ-ության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ, ապա առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից[8]:

8.1.5 Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում հանձնաժողովը ընտրված մասնակցի որոշման նպատակով կիրառում են սույն հրավերով նախատեսված պայմանները:

**Հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումը իրականացվելու է ըստ առանձին չափաբաժինների:**

8.2. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հրավերի 7.7 կետի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն հարվերի ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

8.4 Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկաանդամները:

8.5 Մասնակիցը, իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

Գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել Մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը` օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե Մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա`

1) տվյալ Մասնակցի հայտը մերժվում է.

2) Մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու

---

[7] *Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, կամ եթե գնման առարկան անշարժ գույք է, ապա սույն կետը խմբագրվում է նկատի ունենալով, որ առաջին տեղը զբաղեցնող մասնակցի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր չեն ներկայացվում:*

[8] *Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն գերազանցում է գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև եթե գնման առարկա չի հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն բաժնի 8.1.4 կետը հրավերից հանվում է:*

նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները Պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն` դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

8.6. Սույն հրավերի 8.5 կետի կիրառման նպատակով հրավիրվում է հանձնաժողովի արտահերթ նիստ:

8.7. Պայմանագիր կնքվելու, իսկ սույն ընթացակարգի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը հրավիրվում է արդյունքների ամփոփման նիստ, որի ընթացքում հայտարարվում են ընթացակարգի արդյունքները:

8.8 Մինչև պայմանագիր կնքելը, Պատվիրատուն հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին: Այդ մասին կարող է հայտարարվել`

1) արդյունքների ամփոփման նիստում` հանրային իրազեկման միջոցով, որին հրավիրվել են գնումների գործընթացի բոլոր մասնակիցները.

2) նման հայտարարությունը էլեկտրոնային ձևով կամ ֆաքսով կամ փոստով` պատվիրված նամակով, կարող է ուղարկվել գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին.

3) նման հայտարարությունը տեղադրվում է լիազորված մարմնի, իսկ հնարավորության դեպքում` նաև Պատվիրատուի ինտերնետային կայքում:

8.9 Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և Պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

**Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում << 5 >> օրացուցային օր է: Անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե հայտ է ներկայացրել միայն մեկ Մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիր:**

Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն կետով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կնքված պայմանագիրն առոչինչ է:

8.10 Ամփոփման նիստի վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

8.11 Եթե հանձնաժողովի անդամը և (կամ) Մասնակիցը ամփոփման նիստի վերաբերյալ ցանկանում է արտահայտել ամփոփման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր` նիստի ընթացքում, որը կցվում է սույն մասի 8.10 կետում նշված արձանագրությանը:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

9.1 Պայմանագիր կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա` Պատվիրատուի կողմից: Պայմանագիրը կնքվում է գրավոր` մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

9.2 Ընտրված մասնակիցը հայտարարվելուն հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում Պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին` ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը և պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջը:

Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ընդ որում պայմանագրի նախագծում ներառվում են ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

9.3 Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը Պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է Պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Ընդ որում, Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

9.4 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո սույն հրավերի 8.9 կետով նախատեսված անգործության ժամկետի ավարտից 5 օրացուցային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և սույն հրավերի 10.1 կետով նախատեսված ժամկետում Պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի, իսկ պայմանագրով կանխավճար նախատեսվելու

դեպքում նաև կանխավճարի ապահովումը[9], ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հայտի ապահովումը՝ տուժանքը, վճարում է Մասնակիցը, եթե նա հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

9.5 Մինչև սույն հրավերի 9.4 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

## 10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

10.1 Պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից հինգ օրացուցային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

10.2 Պայմանագրի կատարման ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի տասը տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է ընտրված մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով (Հավելված 10):

10.3 Պայմանագրով Պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը նախապես Պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, երաշխիքի ձևով (օրինակելի ձևը ըստ Հավելված 11-ի), ընդ որում՝ պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում կանխավճարի ապահովումը հիմնավորող փաստաթղթում որպես բենեֆիցիար պետք է նշվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը: Կանխավճարի մարման կարգը սահմանած է պայմանագրի նախագծով:

10.4 Եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով, ապա պայմանագրի և (կամ) կանխավճարի ապահովումը վերադարձվում է այն ներկայացնողին պայմանագրի կատարման ավարտից հետո ոչ ուշ, քան հինգ օրացուցային օրվա ընթացքում:

## 11. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

11.1 Օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը[10].

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում:

11.2. Ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո արգելվում է բացել չբացված հայտերը, որոնք վերադարձվում են մասնակիցներին:

11.3 Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո հինգ օրացուցային օրվա ընթացքում, Պատվիրատուն www.gnumner.am կայքում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

## 12. ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ (ԿԱՄ) ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ՄԱՍՆԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԿԱՐԳԸ

12.1 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու Պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

12.1.1 Յուրաքանչյուր անձ, ով գտնում է, որ Պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի գործողությունների հետևանքով խախտվել են կամ կարող են խախտվել գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, իրավունք ունի ահազանգելու գնումների աջակցման կենտրոն ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ նաև կենտրոն) թեժ գծին:

12.1.2 Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման վերաբերյալ կենտրոնի թեժ գծին ահազանգ ստանալու դեպքում՝

---

[9] *եթե պայմանագրով նախատեսվում է կանխավճար*

[10] *Ընդ որում պետության կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել ՀՀ կառավարության որոշման հիման վրա:*

1) կենտրոնն ստացված ահազանգի վերաբերյալ կազմում է արձանագրություն, եթե առկա են հետևյալ տեղեկությունները`

ա. Պատվիրատուի անվանումը,

բ. գնման ընթացակարգի ծածկագիրը կամ առարկան,

գ. գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման առարկան,

դ. ահազանգողի անունը (անվանումը), եթե այն հայտնի է.

2) կենտրոնի պետի հանձնարարականով կենտրոնի պաշտոնատար անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հեռախոսակապ է հաստատում տվյալ ընթացակարգի գնումների համակարգողի, իսկ անհնարինության դեպքում` Պատվիրատուի ղեկավարի կամ աշխատակազմի ղեկավարի հետ և վերջինիս տեղեկացնում է ստացված ահազանգի վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնում է Պատվիրատուի կողմից կենտրոնին ներկայացվելիք անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը: Կենտրոնն ստացված ահազանգի, ինչպես նաև ներկայացվելիք փաստաթղթերի ցանկի վերաբերյալ սույն ենթակետով նախատեսված ժամկետում ծանուցում է նաև էլեկտրոնային փոստով` Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային հասցեի առկայության դեպքում.

3) Պատվիրատուն մեկ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով սկանավորված տարբերակով կենտրոնին է տրամադրում պահանջված փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև ստացված ահազանգի վերաբերյալ Պատվիրատուի գրավոր կարծիքը.

4) եթե Պատվիրատուի կողմից ընդունվում է կատարված խախտումը և վերջինս համաձայնում անմիջապես վերացնել այն, ապա արձանագրված խախտման և դրա վերացման մասին տեղեկատվությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է կենտրոնին.

5) եթե Պատվիրատուն գտնում է, որ ահազանգված խախտումն առկա չէ, ապա`

ա. մեկ աշխատանքային օրվա ընթացքում կենտրոն է ներկայացնում գրավոր հավաստում խախտման բացակայության մասին, ինչպես նաև` տվյալ գնման ընթացակարգին վերաբերող պահանջված փաստաթղթերի պատճենները,

բ. պահանջվող տեղեկատվությունը և փաստաթղթերի պատճեններն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում կենտրոնում հրավիրվում է քննարկում, որին կարող են մասնակցել բոլոր շահագրգիռ կողմերը,

գ. հրավիրված քննարկման վերաբերյալ կազմվում է արձանագրություն,

դ. քննարկման արդյունքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտում արձանագրվելու դեպքում, կենտրոնի պետի հանձնարարականով, կենտրոնը բողոքարկման գործընթաց է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում,

ե. կենտրոնի կողմից բողոքարկման խորհուրդ բողոքը ներկայացվում է գրավոր` կենտրոնի պետի կողմից, որում ներառվում են Պատվիրատուի անվանումը և գտնվելու վայրը, բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան, կենտրոնի կողմից արձանագրված խախտման առարկան և պահանջը, ահազանգող անձի պահանջը (եթե նման պահանջ առկա է), բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները, այլ անհրաժեշտ տեղեկություններ.

6) կենտրոնի կողմից բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքը քննվում է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և գնումների բողոքարկման խորհրդի գործունեության կարգով սահմանված ընթացակարգով:

12.2 Գնումների, այդ թվում բողոքարկումների հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

12.3 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի Օրենքի համաձայն`

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու Պատվիրատուի և հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին` դիմում ներկայացնելով` <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ին աշխատանքային օրերին և ժամերին, ք. Երևան, Կոմիտասի 54/բ, 115 սենյակ հասցեով,

2) դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, Պատվիրատուի և հանձնաժողովի որոշումները:

12.4 Խորհրդին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով`

1) բողոքը ներկայացրած անձի անունը (անվանումը) և հասցեն.

2) Պատվիրատուի անվանումը և հասցեն.

3) բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան.

4) վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը.

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

6) բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը, ընդ որում՝ բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար դրամ, որը պետք է փոխանցվի <<Հայէկոնոմբանկի Արաբկիրի>> մ/ճ, Հ/Հ 163058100971 <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի հաշվեհամարին: Լիազոր մարմնի և գնումների աջակցման կենտրոնի կողմից գնումների բողոքարկման խորհրդում բողոքարկման գործընթաց նախաձեռնվելու դեպքում բողոքարկման համար վճար չի կատարվում.

7) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

12.5 Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը կարող է ներկայացվել միայն սույն մասի 8.9 կետով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

12.6 Եթե բողոքը չի բավարարում Օրենքի 48-րդ հոդվածի պահանջներին, ապա գնումների աջակցման կենտրոնը խորհրդի անունից այդ մասին տեղեկացնում է բողոքը ներկայացրած անձին՝ նրան տալով արձանագրված թերությունները վերացնելու հնգօրյա ժամկետ:

12.7 Բողոքի վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ընթացակարգով, որի համաձայն բողոքը ներկայացրած անձը, Պատվիրատուն և ներգրավված բոլոր կողմերն իրավունք ունենան ներկագտնվելու խորհրդի նիստերին և ներկայացնելու իրենց տեսակետները:

12.7.1 Բողոքի վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացներում գնումների բողոքարկման խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի ներկայացուցիչը:

12.8 Բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում և հրապարակվում է բողոքը ստանալու օրվանից ոչ ուշ, քան քսանօրացուցային օրվա ընթացքում: Խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

12.9 Խորհուրդն իրավունք ունի ընդունել հետևյալ որոշումները՝

1) որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառելու ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, այդ թվում՝ գնումների ընթացակարգը կամ Պատվիրատուի, հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելուն ուղղված միջոցներ.

2) դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում Պատվիրատուի կամ հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ, այդ թվում՝ սույն մասի 8.9 կետով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը.

3) չեղյալ հայտարարելու կնքված պայմանագիրը՝

ա. եթե Պատվիրատուն պայմանագիրը կնքել է առանց Օրենքի պահանջների համաձայն պայմանագրի մասին ծանուցում հրապարակելու,

բ. Օրենքի 9-րդ հոդվածի կամ սույն մասի 12.17 կետի պահանջները խախտելու դեպքում, եթե նման խախտումը զրկել է շահագրգիռ մասնակցին նախքան պայմանագրի կնքումն իրավական պաշտպանության միջոցների դիմելու հնարավորությունից, և եթե նման խախտումը համադրված է պետական գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ պահանջների խախտման հետ, և եթե վերջին խախտումն ազդել է պայմանագիր կնքելու շահագրգիռ մասնակցի հնարավորությունների վրա.

4) եթե, սույն մասի 12.6 կետի պահանջներին հակառակ, հանձնաժողովը բոլոր համապատասխան փաստերը քննելուց հետո գտնում է, որ ընդհանուր գերակա շահերը պահանջում են ուժի մեջ թողնել պայմանագիրը, ապա կիրառում է այլընտրանքային պատժամիջոցներ՝

ա. պայմանագրի կատարման սահմանափակումը՝ դրա կատարման ժամկետը կրճատելու միջոցով, և (կամ)

բ. Պատվիրատուի հանդեպ պայմանագրի գնի առավելագույնը 10 տոկոսի չափով տուժանքի կիրառում.

5) բոլոր այն դեպքերում, երբ սույն մասի 3-րդ ենթակետով նախատեսված չեղյալ հայտարարելու պատժամիջոցը չի կարող ունենալ հետադարձ ուժ (քանի որ անհնար է վերացնել կատարված պայմանագրային պարտավորությունները), հանձնաժողովը, ի հավելումն, կիրառում է սույն մասի կետի 4-րդ ենթակետի «ա» մասով նախատեսված պատժամիջոցը.

6) հայտարարելու Պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո: Նման որոշումը հիմք է հանդիսանում դատական կարգով ներկայացվելիք վնասի փոխհատուցման հայցի համար.

7) որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

12.10 Գնումների բողոքարկման խորհրդի կողմից բողոքը բավարարվելու դեպքում Պատվիրատուն պատասխանատվություն է կրում բողոքը ներկայացրած անձին պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասի հատուցման համար:

12.11 Բողոքի բանավոր քննությունը բաց է հանրության համար և բողոքը ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում այդ մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում:

12.12 Յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին` մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացնելով համանման բողոք: Օրենքի 48-րդ հոդվածի համաձայն բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների բողոքարկման խորհուրդ համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

12.13 Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն այն կայացնելու օրվանից` 5 օրացուցային օրվա ընթացքում, հրապարակվում է տեղեկագրում և ուղարկվում է Պատվիրատուին, լիազորված մարմին ու բողոքարկման ընթացակարգում ներգրավված կողմերին:

12.14 Յուրաքանչյուր անձ, որը շահագրգռված է կոնկրետ գործարքի կնքման հարցում, և որը վնասներ է կրել Պատվիրատուի, հանձնաժողովի կամ գնումների բողոքարկման խորհրդի կողմից կատարած խախտման հետևանքով, իրավունք ունի դատական կարգով պահանջելու վնասների փոխհատուցում:

12.15 Խորհուրդը կայացնում է բողոքը ներկայացրած անձի պահանջած ժամանակավոր միջոցը կիրառելու մասին որոշում, եթե նման միջոցը պատշաճ և անհրաժեշտ է ակնկալվող վնասը մինչև բողոքի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը կանխելու համար:

12.16 Խորհուրդը հաշվի է առնում ժամանակավոր միջոցի հնարավոր հետևանքները բոլոր այն շահերի, այդ թվում` հանրային շահի համար, որոնք կրելու են վնասներ, և կարող է կայացնել նման միջոց չկիրառելու մասին որոշում, եթե դրա բացասական հետևանքները կարող են գերազանցել օգուտը: Ժամանակավոր միջոց չկիրառելու մասին որոշումը չի կարող ազդել նման միջոցի դիմած անձի որևէ այլ հայցի վրա:

12.17 Բողոքը ինքնաբերաբար չի կասեցնում պայմանագրի կնքման ընթացակարգը, սակայն մինչև խորհրդի կողմից սույն հրավերի 12.15-րդ կամ 12.16-րդ կետերով նախատեսված որոշման ընդունումը Պատվիրատուն իրավունք չունի պայմանագիր կնքելու:

# ՄԱՍ II

# ՀՐԱՀԱՆԳ

# ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել Մասնակիցներին հայտը պատրաստելիս:

1.2 Նպատակահարմարության դեպքում Մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող` այլ ձևերով` պահպանելով պահանջվող վավերապայմանները:

1.3 Հայտերը (ներառվող բոլոր փաստաթղթերը, բացառությամբ սույն հրահանգի 3.2 կետում նշված դեպքերի) պետք է կազմված լինեն հայերեն:

Գնումների բազային միավորի հիսնապատիկը գերազանցող գնումների դեպքում, (եթե նախատեսվում է սույն հրավերով) հայտերը հայերենից բացի կարող են ներկայացվել նաև անգլերեն և (կամ) ռուսերեն:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ

2.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար անհրաժեշտ է Պատվիրատուին ներկայացնել հայտ:

Հայտը սույն հրավերով նախատեսված կարգով սույն ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող անձի կողմից նախապատրաստված և Պատվիրատուին ներկայացված գնման առարկայի վերաբերյալ առաջարկն է, որը ներկայացվում է ընթացակարգին մասնակցելու դիմումով` (Հավելված 1), որում պարտադիր է նշել Մասնակցի հարկ վճարողի հաշվառման համարը, էլեկտրոնային փոստի հասցեն: Ընդ որում Մասնակիցը դիմումին կից ներկայացնում է նաև սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ների) պատճենը[11]:

2.2 Մասնակիցները հայտով ներկայացնում են`

2.2.1 <<Մասնակցության իրավունքը>> չափանիշի` սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարություն իր իսկ կողմից հաստատված` ստորագրված և կնքված այն մասին, որ Մասնակիցը`

1) դատական կարգով սնանկ ճանաչված չէ,

2) չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

---

[11] *Եթե հրավերով լիցենզիայի պահանջ չի սահմանվում, ապա սույն նախադասությունը հրավերից հանվում է:*

3) որի գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4) ներառված չի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,

5) չունի գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

Նշված հայտարարության առաջարկվող ձևը և դրա նկատմամբ առաջադրվող պահանջները ներկայացված են սույն հրավերի N 2 հավելվածում:

Եթե Մասնակիցը հայտով ներկայացրել է սույն կետով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ Մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին: Բացի հայտարարությունից, սույն կետով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով Մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապացուցվել է Մասնակցի` գնումների գործընթացում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման դրսևորման փաստը, ապա տվյալ Մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2.2.2 Հայտարարություն` մասնագիտական փորձառության մասին

1) (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)` գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, այդ դեպքում Մասնակիցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող[12]:

2) (Հավելված 3.2) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին, այդ դեպքում Մասնակիցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող[13]:

3) Գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են սույն հրավերով նախատեսված` համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները հետևյալն են` ________________________________________________________:

սահմանել սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության

Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ Մասնակցի:

2.2.4 Հայտարարություն (Հավելված N 3.3) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին, այդ դեպքում Մասնակիցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող:

2.2.5 Հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.

1) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.4 ) այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

---

[12] *Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկան է հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն կետը հրավերից հանվում է:*

[13] *Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն գերազանցում է գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկան չի հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն կետը հրավերից հանվում է:*

Այդ դեպքում Մասնակիցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող:

2) եթե Մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ Մասնակիցը ֆիզիկական անձ է, ապա Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.5) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին, այդ դեպքում Մասնակիցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող[14]:

3) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.5) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին, այդ դեպքում Մասնակիցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող[15]:

2.2.6 Հայտարարություն (Հավելված N 3.6) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին, այդ դեպքում Մասնակիցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող:

2.2.7 գնային առաջարկ, որը ներկայացվում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում (Հավելված N 4),

2.2.8 Հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացվում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը (Հավելված N 4.1),

2.2.9 Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք մատակարարելու դեպքում՝ հաստատված հայտարարություն դրա վերաբերյալ (Հավելված N 4.2)[16],

2.2.10 գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրը իրականացվելու է գործակալության միջոցով.

2.2.11 համատեղ գործունեության պայմանագիրը, եթե Մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցում է համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով)[17]:

## 3. ԱՌԱՋԻՆ ՏԵՂԸ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

3.1 Սույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հավաստելու և սույն հրավերի 1-ին մասի 4.3 կետով նախատեսված տեղեկատվությունը տրամադրելու համար առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում սույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է

ա) առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը.

բ) նախկինում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենը, ընդ որում՝ նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-

---

[14] *Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերը հրավերից հանվում են:*

[15] *Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն գերազանցում է գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա չի հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն ենթակետը հրավերից հանվում է:*

[16] *Մասնակիցը սույն կետով նախատեսված հայտարարությունը հայտով ներկայացնում է, եթե առաջարկում է մատակարարել Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք:*

[17] *Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ Մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից, բացառությամբ որակավորման չափանիշներին վերաբերող փաստաթղթերի, որոնք հաստատվում են կոնսորցիումի առանձին անդամների կողմից՝ համաձայն կոնսորցիումի պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության:*

ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը[18]:

գ) այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք Մասնակիցը նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ (Հավելված N 5.1): Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար Մասնակիցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները[19].

դ) տեղեկանք՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար Մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին (Հավելված N 5.2): Նշված տեղեկանքին անհրաժեշտ է կցել հիմնական աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատված գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները[20]:

3.2 Հայտում ներառվող՝ դիպլոմների պատճենները, տրանսպորտային միջոցների, տեխնիկական միջոցների, սարքերի, սարքավորումների վերաբերյալ փաստաթղթերը, որոնք տրամադրվել են խորհրդային ժամանակաշրջանում կամ հետխորհրդային ժամանակաշրջանում՝ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից, կարող են կազմված լինել ռուսերեն լեզվով, եթե դրանք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ուժը կորցրած չեն ճանաչվել (համարվել):

3.3 Հայտում ներառված բոլոր կնքված փաստաթղթերը պետք է ստորագրված լինեն կնքողի կողմից:

3.4 Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

## 4. ՀԱՅՏԻ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ

4.1 Առաջարկվող գինը ապրանքների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից, որի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

4.2 Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում՝

ա. Մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման,

բ. գնման առարկաների գծով գնային առաջարկների գնահատման և համեմատման ընթացքում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ առաջարկող Մասնակիցներն ունեն մինչև 15 տոկոս գնային առավելություն:[21]:

4.3 Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով[22]:

## 5. ՀԱՅՏԵՐԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1 Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:

---

[18] *Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն կետը հրավերից հանվում է:*

[19] *Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, կամ եթե գնման առարկան անշարժ գույքն է, կամ եթե <<Տեխնիկական միջոցներ>> որակավորման չափանիշի մասով չեն սահմանվում համապատասխան պահանջներ, ապա սույն կետը հրավերից հանվում է:*

[20] *Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, կամ եթե գնման առարկան անշարժ գույքն է, կամ եթե <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշի մասով չեն սահմանվում համապատասխան պահանջներ, ապա սույն կետը հրավերից հանվում է:*

[21] *Եթե գնման հայտով ներկայացված տվյալ գնման առարկայի պահանջվող քանակի և առավելագույն գնի արտադրյալը գերազանցում է գնումների բազային միավորի 70-ապատիկը, ապա սույն ենթակետը հրավերից հանվում է: Ընդ որում, գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում գնման առարկայի պահանջվող քանակի և առավելագույն գնի արտադրյալը հաշվարկվում է ըստ չափաբաժինների:*

[22] *Սույն կետը սահմանվում է հրավերով, եթե պայմանագրի գինը կայուն է:*

Հայտը փաստաթղթային ձևով ներկայացնելու դեպքում Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը, ինչպես նաև սույն հրավերի 2-րդ մասի՝ հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը /տեղեկությունները/, կազմվում են բնօրինակից /բացառությամբ 3-րդ կողմի կողմից տրամադրված կամ հաստատված փաստաթղթերի, որոնց դեպքում ներկայացվում է դրանց՝ բնօրինակից պատճենահանված տարբերակը/ և ---- օրինակ պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են <<բնօրինակ>> և <<պատճեն>> բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ Մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

5.2 Սույն հրահանգի 5.1 կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

ա) Պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

բ) շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի ծածկագիրը.

գ) <<չբացել մինչև հայտերի բացման նիստը>> բառերը.

դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

5.3 Սույն հրահանգի 5.1 և 5.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

**Հավելված 1**

**<<ԼՄԱՀ-ՆՈւՀ-ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/1->> ծածկագրով**

**շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի**

**հրավերի**

**<< ԼՄԱՀ-ՆՈւՀ-ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/1->> ծածկագրով**

***շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու***

***ընթացակարգի գնահատող հանձնաժողովին***

# ԴԻՄՈՒՄ
# ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

__________________________________ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

Ախթալա համայնքի ՆՈւՀ ՀՈԱԿ-ի կողմից <<-ԼՄԱՀ-ՆՈւՀ-ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/1-->> ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի

................................... չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին

չափաբաժնի (չափաբաժինների) համարը

համապատասխան ներկայացնում է հայտը և համաձայն է սույն հրավերի 7.5 կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումը և դրա հետ կապված՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գործողություններն իրականացնելու համար:

________________________________-ն հայտնում և հավաստում է, որ.

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

1. իր հիմնադրի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի.

2. հանդիսանում է ..................... ռեզիդենտ,

Երկրի անվանումը

3. իր կողմից հայտով առաջարկվող՝ ................................. չափաբաժնում (չափաբաժիններում) նշված

նշվում է չափաբաժնի համարը

ապրանքը (ապրանքները) հանդիսանում է (են) ………..……… արտադրության ապրանք (ապրանքներ):

Երկրի անվանումը

______________________________-ը հայտնում է, որ ունի << ԼՄԱՀ-ՆՈւՀ-ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/1->> ծածկագրով

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված լիցենզիա/ներ/ /պատճենը կցվում է/[23]:

______________________________ -ի հարկ վճարողի հաշվառման համարն է` <<Մասնակցի հարկ վճարողի

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հաշվառման համար>>:

______________________________ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է` <<Մասնակցի էլեկտրոնային փոստի

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հասցե>>:

______________________________________________ ______________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

[23] *Եթե հրավերով լիցենզիայի պահանջ չի սահմանվում, ապա սույն նախադասությունը դիմումից հանվում է:*

Հավելված **2**

**<< ԼՄԱՀ-ՆՈւՀ-ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/1->>** ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

**<< ԼՄԱՀ-ՆՈւՀ-ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/1->>** ծածկագրով
*շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովին*

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ԻՐ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

________________________________________-ն հայտնում և հավաստում է, որ
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հայտը ներկայացնելու օրվա դրությամբ.

1) դատական կարգով սնանկ ճանաչված չէ,

2) չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

3) <<______________________________>>-ի գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4) <<__________________________________________>>-ն ներառված չի գնումների գործընթացին
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,

5) բացակայում է գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,

____________________________________________ ______________
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ.

**Հավելված 3.2**[24]

**<< ԼՄԱՀ-ՆՈւՀ-ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/1->> ծածկագրով**

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

**<< ԼՄԱՀ-ՆՈւՀ-ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/1->> ծածկագրով**

*շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովին*

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույնով ______________________________-ն հայտնում և հավաստում է, որ ունի

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն:

__________________________________________ __________________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ.

**Հավելված 3.3**

[24] *եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն գերազանցում է գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկայի հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն հավելվածը հրավերից հանվում է:*

**<< ԼՄԱՀ-ՆՈւՀ-ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/1->> ծածկագրով**
**շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի**
**հրավերի**

**<< ԼՄԱՀ-ՆՈւՀ-ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/1->> ծածկագրով**
***շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու***
***ընթացակարգի գնահատող հանձնաժողովին***

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույնով ----------------------------------------------------------------------------------ն հայտնում և հավաստում է, որ
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
կազմակերպությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և այդ տեխնիկական միջոցներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

*----------------------------------------------------------------------------------ն և պարտավորվում է սույն հրավերով սահմանված*
*Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)*
*կարգով ներկայացնել սույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը[25]:*

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ.

[25] *Սույն նախադասությունը հրավերից հանվում է, եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, կամ եթե գնման առարկան անշարժ գույք է, կամ եթե <<Տեխնիկական միջոցներ>> որակավորման չափանիշի մասով չեն սահմանվում համապատասխան պահանջներ:*

Հավելված 3.5[26]

**<< ԼՄԱՀ-ՆՈւՀ-ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/1->> ծածկագրով**

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

**<< ԼՄԱՀ-ՆՈւՀ-ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/1->> ծածկագրով**

*շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովին*

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույնով --------------------------------------------------------------------------------ն հայտնում և հավաստում է, որ
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կազմակերպությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ և այդ ֆինանսական միջոցներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

____________________________________ ________________
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ.

---

[26] *եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ մասնակիցը ֆիզիկական անձ է, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է սույն հավելվածը,*

**Հավելված 3.6**

**<<- ԼՄԱՀ-ՆՈւՀ-ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/1->>** ծածկագրով

շրջանակային համաձայն նագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

**<<- ԼՄԱՀ-ՆՈւՀ-ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/1->>** ծածկագրով

*շրջանակային համաձայն նագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովին*

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույնով ---------------------------------------------------------------------------------ն հայտարարում և հավաստում է, որ

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կազմակերպությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսներ և այդ աշխատանքնային ռեսուրսներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

*----------------------------------------------------------------------------ն և պարտավորվում է սույն հրավերով սահմանված*

*Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)*

*կարգով ներկայացնել սույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը[27]:*

______________________________ ______________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ.

---

[27] *Սույն նախադասությունը հրավերից հանվում է, եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, կամ եթե գնման առարկան անշարժ գույքն է, կամ եթե <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշի մասով չեն սահմանվում համապատասխան պահանջներ:*

Հավելված 4
<<ԼՄԱՀ-ՆՈՒՀ-ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/1->> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի
հրավերի

<<ԼՄԱՀ-ՆՈՒՀ-ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/1->> ծածկագրով
*շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու*
*ընթացակարգի գնահատող հանձնաժողովին*

# ԳՆԻ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված <<-ԼՄԱՀ-ՆՈՒՀ-ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/1->> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,

____________________________-ն առաջարկում է պայմանագիրը կատարել
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հետևյալ գներով.

(ՀՀ դրամ)

| Չափա-բաժինների համարները | Ապրանքի անվանումը | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ* | Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6=3+4+5 |
| 1 | Մակարոն, վերմիշել | | | | |
| 2 | Շաքարավազ | | | | |
| 3 | Բուսական յուղ, ձեթ | | | | |
| 4 | Բրինձ | | | | |
| 5 | Ցորենաձավար | | | | |
| 6 | Ոսպ | | | | |
| 7 | Հնդկաձավար | | | | |
| 8 | Տոմատի մածուկ | | | | |
| 9 | Թխվածքաբլիթ | | | | |
| 10 | Կակաո | | | | |
| 11 | Թեյ | | | | |
| 12 | Աղ, կերակրի մանր | | | | |
| 13 | Կաղամբ | | | | |
| 14 | Գազար | | | | |
| 15 | Բազուկ | | | | |
| 16 | Սոխ | | | | |
| 17 | Կանաչի խառը | | | | |
| 18 | Կարտոֆիլ | | | | |
| 19 | Տավարի միս | | | | |
| 20 | Հավի միս | | | | |
| 21 | Թթվասեր | | | | |
| 22 | Կարագ | | | | |
| 23 | Խտացրած կաթ | | | | |
| 24 | Հավկիթ | | | | |
| 25 | Կոնֆետ | | | | |

**Եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 5-րդ սյունակում:*

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)
(ստորագրությունը)

Կ. Տ.

**Հավելված 4.1**

**<< ԼՄԱՀ-ՆՈւՀ-ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/1->> ծածկագրով**

**շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի**

**<< ԼՄԱՀ-ՆՈւՀ-ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/1->> ծածկագրով**

***շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովին***

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ՝ ՀՐԱՎԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույնով ----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------ն հայտարարում և հավաստում է, որ
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
***իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող՝ (նշվում է չափաբաժնի համարը) չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագիրը համապատասխանում է (են) <<- ԼՄԱՀ-ՆՈւՀ-ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/1->> ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների (ապրանքների) տեխնիկական բնութագրերին:***

Ընդ որում՝ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ................ պարտավորվում է ներկայացնել իր կողմից հաստատված՝ հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

**Հավելված 4.2**

**<< ԼՄԱՀ-ՆՈւՀ-ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/1->>** ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի

հրավերի

**<<- ԼՄԱՀ-ՆՈւՀ-ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/1->>** ծածկագրով

*շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու*

*ընթացակարգի գնահատող հանձնաժողովին*

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

### ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՄԱՏԱԿԱՐԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույնով ------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------ -ն հայտարարում և հավաստում է, որ

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

***իր կողմից հայտով առաջարկվող՝ (նշվում է չափաբաժնի համարը) չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքը (ապրանքները) հանդիսանում է (են) Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք:***

*Ընդ որում ընտրված մասնակից ճանաչվելու և պայմանագիր կնքվելու դեպքում ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման ժամանակ Պատվիրատուին պետք է ներկայացվի նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը:*

__________________________________________ ________________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ.

**Հավելված 5**
**<< ԼՄԱՀ-ՆՈւՀ-ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/1->>** ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի
հրավերի

**<< ԼՄԱՀ-ՆՈւՀ-ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/1->>** ծածկագրով

*շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովին*

Կից Ձեզ եմ ներկայացնում ______________________________-ի՝ <<ԼՄԱՀ-ՆՈւՀ-ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/1->>
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը[28]:

______________________________________________ ____________
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)
(ստորագրությունը)

Կ. Տ.

---

[28] *Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, կամ եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն նախադասությունը խմբագրվում է նախատեսելով, որ մասնակիցը ներկայացնում է միայն իր կողմից առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը:*

*Հավելված 5.1*[29]

**<< ԼՄԱՀ-ՆՈւՀ-ՀՈԱԿ-ԾՀ ԱՊՁԲ-16/1->> ծածկագրով**

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

**<< ԼՄԱՀ-ՆՈւՀ-ՀՈԱԿ-ԾՀ ԱՊՁԲ-16/1->> ծածկագրով**

*շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովին*

## ՏԵՂԵԿԱՆՔ
## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ (ՍԱՐՔԵՐԻ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ) ՄԱՍԻՆ

| N ը/կ | Տեխնիկական միջոցի (սարքի, սարքավորման տեսակը) | Տեխնիկական միջոցի (սարքի, սարքավորման) մակնիշը, պետհամարանիշը (եթե առկա է) և արտադրության տարեթիվը | Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքի տեսակը |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

-Կից ներկայացնում ենք տեխնիկական միջոցների տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ Մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերի պատճենները:

______________________________________ ________________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ.

---

[29] *Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, կամ եթե գնման առարկան անշարժ գույքն է, կամ եթե <<Տեխնիկական միջոցներ>> որակավորման չափանիշի մասով չեն սահմանվում համապատասխան պահանջներ, ապա սույն հավելվածը հրավերից հանվում է:*

Հավելված 6
<< ԼՄԱՀ-ՆՈւՀ-ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/1->> ծածկագրով
*շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի*

**-ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈւՀ ՀՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N << ԼՄԱՀ-ՆՈւՀ-ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/1>>**

ք. Ախթալա << >> << >> 2016 թ.

Ախթալա համայնքի ՆՈւՀ ՀՈԱԿ-ն, ի դեմս տնօրեն Շ. Հարությունյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիմաև վրա, այսուհետ` <<Գնորդ>>, մի կողմից, և <<____________________>> -ն, ի դեմս տնօրեն ____________________յանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ` <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ` Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում` (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ` Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով` Տեխնիկական բնութագրով նախատեսված ____________________ /այսուհետ` Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

**2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով` գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/` նրա կողմից նշված հասցեով /ներով/:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

3.1 Գնորդն իրավունք ունի`

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են ---- օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի` Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն` իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա` պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ`

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ---- օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմանագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան` պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է` ________________ (______________________________________________) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից`----------- (-------------------------) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին` որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է Պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ[30]:

4.1.2 Պայմանագիրը կնքվում է ընդհանուր`______ՀՀ դրամ արժեքով, սակայն քանի որ նախատեսված են ավելի քիչ միջոցներ, քան Պայմանագրի գինն է` Ապրանքի մնացած մասը կմատակարարվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում` լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Ապրանքի մատակարարման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով Պայմանագիրը կլուծվի[31]:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ` դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա` Պայմանագրի վճարման ժամանակացույցով` հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով` վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան ____________ 20 թ.:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված --------------- օրը (առնվազն 365 օրացուցային օրը)[32]:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները[33]:

## 6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

---

[30] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կանխավճարի տրամադրում չի նախատեսվում:*

[31] *Սույն կետը կարող է նախատեսվել պայմանագրի նախագծով, եթե կիրառելի է:*

[32] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկան չի հանդիսանում հիմնական միջոց:*

[33] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկան չի հանդիսանում հիմնական միջոց:*

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/` Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով` նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության ________ օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը`

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից ____օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6.6 Ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ Վաճառողը Գնորդին է տրամադրում նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը[34]:

## 7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված` մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ` մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք` Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[35]:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ` վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և

---

[34] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե չի մատակարարվում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք:*

[35] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած` կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած` հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ` համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը` առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Եթե Պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) Պայմանագրի կատարման ընթացքում` գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին` տրամադրելով գործակալության

պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում[36]:

9.7 Եթե Պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[37]:

9.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.12 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| -------------------------------- | -------------------------------- |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

---

[36] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[37] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

Հավելված N 1
<< >> << >> 20 թ. կնքված
N ____________________ ծածկագրով գնման պայմանագրի

______________________________________________ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Չ/Հ | Անվանումը | ապրանքատեսակի նկարագիրը | Արտադրող, ապրանքային անվանում, քաշ, յուղայնություն և այլ ֆիզիկական նկարագրեր | Չափման միավորը | Քանակը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Մակարոնեղեն | մակարոն, վերմիշել | Մակարոնեղեն անդրոժ խմորից, կախված ալյուրի տեսակից և որակից՝ A (պինդ ցորենի ալյուրից), Б (փափուկ ապակենման ցորենի ալյուրից), B (հացաթխման ցորենի ալյուրից), չափածրարված և առանց չափածրարման: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | 230 |
| 2 | Շաքարավազ | շաքարավազ սպիտակ | Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը՝ 99,75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված), խոնավության զանգվածային մասը՝ 0,14%-ից ոչ ավել, ֆեռոխառնուկների զանգվածային մասը՝ 0,0003%-ից ոչ ավել, պիտանելիության մնացորդային ժամկետը՝ մատակարարման պահին սահմանված ժամկետի 50%-ից ոչ պակաս: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | 380 |
| 3 | Բուսական յուղ, ձեթ | արևածաղկի ձեթ, ռաֆինացված, (զտած) | Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզմման եղանակով, բարձր տեսակի, զտված, հոտազերծված: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, մակնշումը՝ “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | լիտր | 180 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4 | Բրինձ | մշակված բրինձ | Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած, լայնությունից բաժանվում են 1-ից մինչև 4 տիպերի, ըստ տիպերի խոնավությունը 13%-ից մինչև 15%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառ. 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված , Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի. | կգ | 180 |
| 5 | Ցորենաձավար | ցորենաձավար | Ստացված ցորենի թեփահան հատիկների հղկմամբ, կամ հետագա կոտրատմամբ, ցորենի հատիկները լինում են հղկված ծայրերով կամ հղկված կլոր հատիկների ձևով, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, աղբային խառնուկները 0,3%-ից ոչ ավելի, պատրաստված բարձր և առաջին տեսակի ցորենից, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված,"Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | 70 |
| 6 | Ոսպ | ոսպ, ամբողջական | Երեք տեսակի, համասեռ, մաքուր, չոր՝ խոնավությունը՝ (14,0-17,0) % ոչավելի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | 90 |
| 7 | Հնդկաձավար | հնդկաձավար | Հնդկաձավար I կամ II տեսակների, խոնավությունը՝ 14,0 %-ից ոչ ավելի, հատիկները՝ 97,5 %-ից ոչ պակաս: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 70 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | 120 |
| 8 | Տոմատի մածուկ | տոմատի մածուկ | Բարձր կամ առաջին տեսակների, ապակե կամ մետաղյա տարաներով, փաթեթավորումը՝ մինչև 10 դմ3 տարողությամբ: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի : | կգ | 35 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 9 | թխվածքաբլիթ | | Կաթնահունց, շաքարահունց և երկարատև պատրաստված, խոնավությունը 3 %-ից մինչև 10 %, շաքարի զանգվածային պարունակությունը՝ 20%-ից մինչև 27 %, յուղայնությունը՝ 3%-ից մինչև 30%: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | 70 |
| 10 | Կակաո | Կակաոյի փոշի | Խոնավությունը՝ 6.0 %-ից ոչ ավելի, pH-ը՝ 7.1-ից ոչ ավելի, դիսպերսությունը՝ 90.0 %-ից ոչ պակաս, փաթեթավորված թղթե տուփերում և մետաղյա կամ ապակե բանկաներում, ինչպես նաև ոչ կշռաբաժանված, ԳՕՍՏ 108-76: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի | Հատ | 35 |
| 11 | Թեյ | թեյ, սև | Բայխաթեյ սև չափածրարված և առանց, խոշոր տերևներով, հատիկավորված և մանր: Միանգամյա օգտագործման թեյի տոպրակները տեսակավորված են 2, 2,5 և 3 գ փաթեթներով: "Փունջ", բարձրորակ և I տեսակների: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | Հատ | 70 |
| 12 | Աղ | աղ, կերակրի, մանր, | Կերակրի աղ՝ բարձր տեսակի, յոդացված ՀՏՍ 239-2005 Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս: | հատ | 70 |
| 13 | Կաղամբ | Կաղամբ | Թարմ գլուխ կաղամբ՝ մանրածախ առևտրի ցանց և հանրային սննդի օբյեկտներ մատակարարման և իրացման համար: Կաղամբակոթի երկարությունը 3սմ-ից ոչ ավելի: Կաղամբի մաքրված գլուխների քաշը ոչ պակաս՝ 0.8 կգ, վաղահաս կաղամբինը՝ 0.3- 0.4 կգ: Ճաքած և 3 սմ-ից ոչ ավելի խորությամբ, մեխանիկական վնասվածքներով կաղամբի գլուխների զանգվածային մասը՝ 5%-ից ոչ ավելի: 3 սմ-ից ավելի խորությամբ մեխանիկական վնասվածքներով, ճաքերով, նեխած, գյուղատնտեսական վնասատուներով վնասված, ցրտահարված, շոգեհարված՝ միջուկի դեղնվածության և կարմրածության նշաններով գլուխների առկայություն չի թույլատրվում: Չի թույլատրվում նշահատված գլուխներով և կաղամբակոթերով կաղամբի առկայություն: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913Ն որոշմամբ հաստատված "Թարմ | Կգ | 150 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | պտուղ բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի” և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀօրենքի 8-րդ հոդվածի: | | |
| 14 | Գազար | Գազար | Սովորական և ընտիր տեսակի: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված “Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի” և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | 25 |
| 15 | Բազուկ | Ճակնդեղ, արմատապտուղ | Արտաքին տեսքը՝ արմատապտուղները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չոր, չկեղտոտված, առանց ճաքերի և վնասվածքների: Ներքին կառուցվածքը՝ միջուկը հյութալի, մուգ կարմիր՝ տարբեր երանգների: Արմատապտուղների չափսերը (ամենամեծ լայնակի տրամագծով) 5-14սմ: Թույլատրվում է շեղումներ նշված չափսերից և մեխանիկական վնասվածքներով 3 մմ ավել խորությամբ՝ ընդհանուր քանակի 5%-ից ոչ ավելի: Արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավել քան ընդհանուր քանակի 1%: | կգ | 25 |
| 16 | Սոխ | սոխ, գլուխ | Թարմ, կծու, կիսակծու կամ քաղցր, ընտիր տեսակի, նեղ մասի տրամագիծը 3 սմ-ից ոչ պակաս, ԳՕՍՏ 27166-86, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, Թարմ պտուղբանջարեղենի տեխնիկական կանոնակարգի և Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | 50 |
| 17 | Կանաչի | Կանաչի խառը | Կանաչի տարբեր տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և Սննդամթերքի անվտանգության մասին՝ ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի | կապ | 100 |
| 18 | Կարտոֆիլ | Կարտոֆիլ | Վաղահաս և ուշահաս, I տեսակի, չցրտահարված, առանց վնասվածքների, կլոր ձվաձև 4 սմ, 5%, երկարացված 3,5սմ, 5 %, կլոր ձվաձև (4-ից 5) սմ 20%, երկարացված (4-ից 4,5) սմ 20%, կլոր ձվաձև (5-ից 6սմ) 55%, երկարացված (5-ից 5,5) սմ 55%, կլոր ձվաձև (6-ից 7) սմ 20%, երկարացված (6-ից 6,5) սմ 20%: Տեսականու մաքրությունը՝ 90 %-ից ոչ պակաս, փաթեթավորումը՝ առանց չափածրարման: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ- | կգ | 997 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | | |
| 19 | տավարի միս | փափուկ | Միս տավարի պաղեցրած, փափուկ միս առանց ոսկորի, զարգացած մկաններով, պահված 0 oC –ից մինչև 4oC ջերմաստիճանի պայմաններում՝ 6 ժ-ից ոչ ավելի, I պարարտության, պաղեցրած մսի մակերեսը չպետք է լինի խոնավ, ոսկորի և մսի հարաբերակցությունը՝ համապատասխանաբար 0 % և 100 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառա-վարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: ՀՍՏ 342-2011: | կգ | 20 |
| 20 | Հավի միս | Հավի մսեղիք պաղեցրած, ամբողջական | Բրոյլեռ տիպի, առանց փորոտիքի, մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթներով, ԳՕՍՏ 25391-82: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված “Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի” և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ | 104 |
| 21 | Թթվասեր | թթվասեր | Թարմ կովի կաթից, յուղայնությունը՝ 20 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 65-100 0T, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 % | կգ | 280 |
| 22 | Կարագ | Կարագ | Սերուցքային, յուղայնությունը՝71,5-82,5%, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7 գ, ածխաջուր 0,7 գ, 740 կկալ 200-250 գ կամ 20-25 կգ գործարանային փաթեթներով, ԳՕՍՏ 37-91 կամ համարժեք: Անվտանգությունը և մակնշումը՝ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված | կգ | 80 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 23 | Խտացրած կաթ | Խտացրած կաթ շաքարով | Խտացրած կաթ շաքարով, խոնավությունը՝ 26,5 %-ից ոչ ավելի, սախարոզը 43,5 %-ից ոչ պակաս, կաթնային չոր նյութերի զանգվածային մասը՝ 28,5 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 48 0T-ից ոչ ավելի, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 70 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի, | հատ | 160 |
| 24 | Հավի ձու | ձու, 02 կարգ | Ձու սեղանի կամ դիետիկ, 02-րդ կարգի, տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, դիետիկ ձվի պահպանման ժամկետը՝ 7 օր, սեղանի ձվինը՝ 25 օր, սառնարանային պայմաններում՝ 90 օր, ՀUS 182-2012 Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ N2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի, "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | հատ | 60 |
| 25 | կոնֆետ | Կոնֆետ | Կարամելկաթնային, պոմադային, մրգային, դոնդողային, դոնդողամրգային, նշակարկանդային, գրիլյաժային, պրալինե հավելանյութերով:Կախված կոնֆետի տեսակից խոնավության զանգվածային մասը՝ 4-25 %-ից ոչ ավել, փաթեթավորումը՝ նրբաթիթեղի և թղթի մեջ, չփաթաթված՝ հատավոր, կշռածրարված տուփերով, խառը տեսականիով: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդհոդվածի: | կգ | 25 |

| | |
|---|---|
| Մատակարարման պայմանները և ժամկետները՝ | Ապրանքը ինչպես նաև գնման գործընթացին վերաբերող բոլոր փաստաթղթերը ընկերության կողմից սեփական միջոցներով տեղափոխել ՀՀ Լոռու մարզ ք. Ախթալա Աբովյան 2/1 Ախթալա համայնքի ՆՈւՀ ՀՈԱԿ, ըստ գնման ժամանակացույցի:<br>Օրեկան պատվերը տրվում է նախորդող օրվա մինչև ժամը 15:00, շաբաթական պատվերը՝ նախորդ շաբաթվա մինչև 5-րդ աշխատանքային օրը, իսկ ամսական պատվերը՝ նախորդ ամսվա մինչև վերջին աշխատանքային օրը: Ընդ որում օրեկան պատվերի դեպքում մատակարարումն իրականացվում է մինչև տվյալ օրվա ժամը 09:00, շաբաթական մատակարարումը՝ մինչև տվյալ շաբաթվա 1-ին աշխատանքային օրվա ժամը 10:00, ամսական մատակարարումը՝ մինչև տվյալ ամսվա 1-ին աշխատանքային օրվա ժամը 10:00: Մատակարարումներն իրականացվում են ըստ մատակարարման ժամկետների՝(օրեկան, շաբաթական, ամսական), և ըստ պատվիրատուի կողմից սահմանված քանակների, նկատի ունենալով, որ մատակարարման առաջին պատվերի տրամադրման և մատակարարման միջև ընկած Ժամանակահատվածը չի կարող պակաս լինել 30 աշխատանքային օրից, եթե մատակարարը չի համաձայնում մատակարարումն իրականացնել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման քանակները սահմանում է Պատվիրատուն: Ապրանքի տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է Վաճառողը: |

| | |
|---|---|
| Պարտադիր պայման | բոլոր ապրանքները պետք է լինեն պահպանման ժամկետի մեջ մինչև ապրանքի սպառման օրը, հակառակ դեպքում մատակարարն ապահովում է ապրանքի հետ վերադարձը և փոխարինումը: |

**ԳՆՈՐԴ** **ՎԱՃԱՌՈՂ**

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
<< >> << >> 20 թ. կնքված
,N ____________________ *ծածկագրով գնման պայմանագրի*

_______________________________________ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/Հ | Ապրանքի | | | Նախատեսվում է գնել 2016 թ. ըստ ամիսների | |
|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Չափման միավորը | Միավորի գինը | հունվար-դեկտեմբեր | |
| | | | | քանակը | գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Մակարոն, վերմիշել | Կգ | | 230 | |
| 2 | Շաքարավազ | Կգ | | 380 | |
| 3 | Բուսական յուղ, ձեթ | լիտր | | 180 | |
| 4 | Բրինձ | Կգ | | 180 | |
| 5 | Ցորենաձավար | Կգ | | 70 | |
| 6 | Ոսպ | Կգ | | 90 | |
| 7 | Հնդկաձավար | Կգ | | 120 | |
| 8 | Տոմատի մածուկ | Կգ | | 35 | |
| 9 | Թխվածքաբլիթ | Կգ | | 70 | |
| 10 | Կակաո | Հատ | | 35 | |
| 11 | Թեյ | Հատ | | 70 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 12 | Աղ, կերակրի մանր | Հատ | | 70 | |
| 13 | Կաղամբ | Կգ | | 150 | |
| 14 | Գազար | Կգ | | 25 | |
| 15 | Բազուկ | Կգ | | 25 | |
| 16 | Սոխ | Կգ | | 50 | |
| 17 | Կանաչի խառը | Կապ | | 100 | |
| 18 | Կարտոֆիլ | Կգ | | 997 | |
| 19 | Տավարի միս | Կգ | | 20 | |
| 20 | Հավի միս | Կգ | | 104 | |
| 21 | Թթվասեր | Կգ | | 280 | |
| 22 | Կարագ | Կգ | | 80 | |
| 23 | Խտացրած կաթ | Հատ | | 160 | |
| 24 | Հավկիթ | Հատ | | 60 | |
| 25 | Կոնֆետ | Կգ | | 25 | |
| Ընդամենը | | | | X | |

ԳՆՈՐԴ

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
<< >> << >> 20 թ. կնքված
N ____________________ *ծածկագրով գնման պայմանագրի*

______________________________________________ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Գնման առարկան՝ ապրանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում |
| --- | --- |
| Սննդամթերք | հունվար-դեկտեմբեր |
| Ծանոթություն. Վճարումը կատարվելու է կատարված մատակարարումներին համամասնորեն՝ առավելագույնը 10 բանկային օրվա ընթացքում: | |

**ԳՆՈՐԴ**

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 4
<< >> << >> 20 թ. կնքված
N ____________________ *ծածկագրով գնման պայմանագրի*

Պայմանագրի կողմ
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ ____________________________
______________________________
հվհհ __________________________

Պատվիրատու
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ ____________________________
______________________________
հվհհ __________________________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

§ ¦§ ¦ 20 Ã.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
________________________________________________________________________________
______
________________________________________________________________________________
______
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «____________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ___________
Պատվիրատուն՝ ի դեմս
__________________________________________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս ________________________________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «____________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն

մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի՝ շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 4.1
<< >> << >> 20 թ. կնքված
N ____________________ *ծածկագրով գնման պայմանագրի*

## ԱԿՏ N
### պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ -----------------------------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
-------------------------------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված N -------------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

| | |
|---|---|
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| ստորագրություն | ստորագրություն |

Հավելված 7

<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

ՀԱՐՑՈՒՄ
ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի "Գնումների գործընթացի կազմակերպման"
կարգի 47-րդ կետի 1-ին մասով նախատեսված տվյալների ճշտման մասին

........................................................-ի կարիքների համար կազմակերպված ...........................................................
պատվիրատուի անվանումը                                        գնման ընթացակարգի ծածկագիրը

ծածկագրով կազմակերպման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20..... թվականի ....................-ի N ...... որոշմամբ 1-ին և 2-րդ տեղեր են զբաղեցրել ներքոհիշյալ մասնակիցները՝

| N | Մասնակցի | | |
|---|---|---|---|
| | անվանումը | հարկ վճարողի հաշվառման համարը | հայտը ներկայացվելու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը |
| | | | |
| | | | |

Խնդրում ենք ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 48-րդ կետով սահմանված ժամկետում տրամադրել եզրակացություն մասնակիցների՝ նույն կարգի 47-րդ կետի 1-ին մասով նախատեսված տվյալների վերաբերյալ:

............................... ծածկագրով գնահատող
հանձնաժողովի քարտուղար .........................                                        ստորագրություն .......................

........... ................ 20.....

Հավելված 8

<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 47-րդ կետի 1-ին մասով նախատեսված հարցման մասին

| Գնման ընթացակարգի ծածկագիրը | Պատվիրատուի անվանումը | Մասնակցի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | անվանումը | հարկ վճարողի հաշվառման համարը | հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների գումարի չափը/ՀՀ դրամ | հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը/ՀՀ դրամ | | | | հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը/ՀՀ դրամ | |
| | | | | | | | | | ակտիվներ | պարտավորություն |
| | | | | | 20..թ. | 20..թ. | 20..թ. | Ընդամենը | | |
| | | | | | | | | | | |

Եզրակացությունը տրվել է ................................ վարչության աշխատակից ................................-ի կողմից

................................................................ .............................................
պաշտոնյայի անունը, ազգանունը ստորագրություն

Հավելված 10

<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի
հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N <<---ՇՀԱՊՁԲ---/--->>

ք. Երևան <<____>>______________20 թ.

<<Ընկերության անվանումը>>, ի դեմս Ընկերության տնօրեն` <<Ընկերության տնօրենի անունը ազգանունը, անձնագրային տվյալները>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա` (այսուհետև` Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է <<Պատվիրատուի անվանումը>> (այսուհետ` Պատվիրատու) կողմից կազմակերպված` <<Գնման առարկայի անվանումը>> ձեռքբերման <<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով ---------- գնման ընթացակարգին և պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում, ուստի սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրի` Ընկերության կողմից ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը, կից ներկայացված վճարման պահանջագիրը` լրացված և հաստատված Ընկերության կողմից` համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած` <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.2. Ընկերության կողմից սույն ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը ոչ պատշաճ կատարելու, չկատարելու կամ կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագիրը ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին` վճարելու պահանջագրի մեջ նշված գումարը:

1.3. Պահանջագիրը բանկ ներկայացնելուց հետո տասնօրյա ժամկետում Պատվիրատուին գումարը բանկից անկախ պատճառներով չփոխանցվելու դեպքում, Պատվիրատուն Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները`

Ընկերության անվանումը
Ընկերության հասցեն

Ընկերության բանկի անվանումը
Ընկերության Հ/Հ
Ընկերության ՀՎՀՀ

տնօրեն`-------------------------------
(ստորագրություն)

գլխ. հաշվապահ` ----------------------------
(ստորագրություն)

Կ.Տ

<table>
<tr><td colspan="2">ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N[38]<br>"_____" _______ 20___ թ.</td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="2">Վճարող`<br>ՀՎՀՀ -</td><td rowspan="2">ԴԵԲԵՏ</td><td rowspan="2">ԳՈՒՄԱՐ<br>000,000.00</td></tr>
<tr><td colspan="2">Վճարողի բանկը`</td></tr>
<tr><td colspan="2">Շահառու`<br>ՀՎՀՀ -</td><td>ԿՐԵԴԻՏ</td><td>ԳՈՒՄԱՐ<br>(ԲԱՌԵՐՈՎ)</td></tr>
<tr><td colspan="2">Շահառուի բանկը`</td><td colspan="2">հշ.N</td></tr>
<tr><td colspan="4">Գումարը բառերով`</td></tr>
<tr><td colspan="4">Գնման գործընթացի ծածկագիրը</td></tr>
<tr><td colspan="4">Վճարման նպատակը<br>Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը<br>Կից____էջ</td></tr>
<tr><td>Շահառուի ստորագրությունները<br>/_____________________/<br>/_____________________/<br>Կ.Տ.</td><td colspan="3">Վճարողի ստորագրությունները<br>/_____________________/<br>/_____________________/<br>Կ.Տ.</td></tr>
<tr><td>Կատարված է շահառուի բանկի կողմից<br>/_____________________/<br><<__>>______20__թ.<br>Կ.Տ.</td><td colspan="3">Կատարված է վճարողի բանկի կողմից<br>/_____________________/<br><<__>>______20__թ.<br>Կ.Տ</td></tr>
</table>

..........................................................................................................................................................................................................................

[38] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

## Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգը

| Դաշտի համար | <<Վճարման պահանջագիր>> փաստաթղթի վավերապայմաններ | Նշված դաշտի/վավերապայմանի առկայությունը փաստաթղթում | Վավերապայմանի լրացման պահանջը |
|---|---|---|---|
| **1** | **2** | **3** | **4** |
| 1. | վճարման պահանջագրի համարը | պարտադիր | պարտադիր |
| 2. | ներկայացման ամսաթիվը | պարտադիր | պարտադիր, լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը |
| 3. | վճարող | պարտադիր | պարտադիր լրացվում է այն անձի (վճարողի) անունը, որի հաշվից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը: Լրացվում է վճարողի անունը, ազգանունը, եթե այն ֆիզիկական անձ է կամ անվանումը, եթե այն իրավաբանական անձ է: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության: |
| 4. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը | պարտադիր | պարտադիր |
| 5. | վճարողի հաշվի համարը | պարտադիր | պարտադիր լրացվում է վճարողի բանկային հաշվի համարը իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպությունում (մասնաճյուղի), որից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը: |
| 6. | վճարողի ՀՎՀՀ | պարտադիր | ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է հաշվառված հարկատու |
| 7. | վճարողի ՀԾՀ | պարտադիր | ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է ֆիզիկական անձ |
| 8. | շահառու | պարտադիր | պարտադիր լրացվում է շահառու հանդիսացող անձի (վճարումը ստացողի) անունը, ազգանունը, եթե այն ֆիզիկական անձ է կամ անվանումը, եթե այն իրավաբանական անձ է: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության: |
| 9. | շահառուի ՀՎՀՀ | պարտադիր | ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ շահառուն հանդիսանում է հաշվառված հարկատու |
| 10. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը | պարտադիր | պարտադիր |
| 11. | շահառուի հաշվի համարը | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառուի այն բանկային հաշվի համարը, որի վրա պետք է փոխանցվեն վճարողից գանձված միջոցները: |
| 12. | գումարը (թվերով և բառերով) | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառուին վճարման ենթակա գումարը |
| 13. | արժույթը (բառերով և/կամ կոդով) | պարտադիր | պարտադիր |
| 14. | գործարքի նպատակը | պարտադիր | պարտադիր |
| 15. | պայմանագրի համարը կամ գնման ընթացակարգի ծածկագիրը | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է պահանջագրի ներկայացման համար հիմք հանդիսացող պայմանագրի համարը կամ գնման ընթացակարգի ծածկագիրը |
| 16. | փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանները | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է պահանջագրով նշված գումարի գանձման և շահառուին վճարման համար հիմք հանդիսացող փաստաթղթի տվյալները, որոնց հիման վրա շահառուն վճարման պահանջագիր է ներկայացնում վճարողին սպասարկող բանկին, ինչպես նաև նշվում են վճարողին փաստաթղթերի տրամադրման պայմանները (տրամադրում` վճարի դիմաց, տրամադրում` ակցեպտի դիմաց, տրամադրում` երաշխիքի դիմաց և այլն): |
| 17. | առդիր էջերի քանակը | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է պահանջագրին կից ներկայացված փաստաթղթերի էջերի քանակը, որոնք պետք է տրամադրվեն վճարողին: |
| 18. | վճարողի ստորագրությունը | պարտադիր | ոչ պարտադիր<br>այս դաշտը չի լրացվում, եթե վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված պայմանագրով սահմանվել են այն դեպքերը, երբ վճարողը նախապես տալիս է իր համաձայնությունը/լիազորում է ֆինանսական կազմակերպությանը (մասնաճյուղին) կատարել վճարումներ` գանձելով այդ գումարը հաշվից: |
| | վճարողի կնիքը | պարտադիր | ոչ պարտադիր |
| 19. | շահառուի | պարտադիր | պարտադիր |

| | | | |
|---|---|---|---|
| | ստորագրությունը | | |
| | շահառուի կնիքը | պարտադիր | ոչ պարտադիր |
| 20. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը | պարտադիր | ոչ պարտադիր |
| | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կնիքը | պարտադիր | չի լրացվում |
| 21. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը | պարտադիր | պարտադիր վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում |
| | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կնիքը | պարտադիր | պարտադիր վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում |
| 22. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից ակցեպտավորված գումարը | պարտադիր | պարտադիր այս դաշտը լրացվում է վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից, որտեղ նշվում է այն գումարը, որը փաստացի գանձվել է վճարողի հաշվից, ինչպես նաև նշվում է արժույթը |
| 23. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից ակցեպտավորման ամսաթիվը, ժամը, րոպեն | պարտադիր | պարտադիր վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից պարտադիր նշվում է պահանջագրի ակցեպտավորման ամսաթիվը, ժամը, րոպեն |

Հավելված 11
<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի
հրավերի

**ԵՐԱՇԽԻՔ N __________**

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ______________________________
(անունը, ազգանունը կամ անվանումը)

(այսուհետ՝ բենեֆիցիար[39]) և ________________________ (այսուհետ՝ պրինցիպալ) միջև
(անունը, ազգանունը կամ անվանումը)

__________________ կնքված N ______________ պայմանագրից բխող պրինցիպալի
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) (պայմանագրի համարը)

պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով _____________________________(այսուհետ՝ երաշխիք տվող անձ)
(երաշխիք տվող բանկ, այլ վարկային հաստատություն կամ ապահովագրական կազմակերպություն)

անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել
____________ (_____________) ________________________ (այսուհետ՝
(գումարը՝ թվերով) (գումարը՝ տառերով) (դրամ կամ այլ արժույթ)

երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո _____________ (________________)
(օրերը՝ թվերով) (օրերը՝ տառերով)

աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի

_____________________________ բանկում բացված ___________________________
(բանկի անվանումը) (բանկային հաշվի համարը)

բանկային հաշվին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է ________________ մինչև ______________ ներառյալ:
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) (ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) ________________________________________________________________
2) ________________________________________________________________
3) ________________________________________________________________:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը __________ (_______________)
(օրերը՝ թվերով) (օրերը՝ տառերով)
աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, ապա բենեֆիցիարն իրավունք ունի երաշխիք տվող անձի բանկից պահանջելու երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն երաշխիքի իր օրինակը:

---

[39] *Պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում՝ որպես բենեֆիցիար պետք է նշվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:*

9. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ բենեֆիցիարի կողմից սույն երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ ________ չափով: Ընդ որում, երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն ________________________

Գլխավոր հաշվապահ ______________________

________________________________
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)